

## Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 3

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2015 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ՀՀ Սահմանադրության նախագծի քննարկում, առաջարկություններ:
2. Հեռակա ասպիրանտուրայի անվճար տեղերի թեկնածուների առաջադրում:
3. 2016-18 թթ. ընթացքում նախատեսվող միջազգային գիտաժողովների և սեմինարների անցկացման ծրագրերի առաջադրում և հաստատում:
4. Ֆակուլտետային օրինակելի կանոնադրության հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը: Իր խոսքի սկզբում նա ողջունեց գիտխորհրդի անդամներին և հայտնեց, որ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 29 անդամներից այս պահին նիստին մասնակցում են 24-ը, ապահովված է անհրաժեշտ քվորումը: Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի օրակարգը:

**1-ին հարցի** առիթով արտահայտվեցին պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը, Յու. Ավետիսյանը, Վ. Գաբրիելյանը և ուրիշները: Ելույթ ունեցողները, կատարելով որոշ դիտարկումներ, հավանություն տվեցին ՀՀ Սահմանադրության փոփոխություններին՝ մատնանշելով դրանց դրական կողմերը:

**2-րդ հարցի՝** հեռակա ասպիրանտուրայի անվճար տեղերի թեկնածուների առաջադրման առիթով ելույթ ունեցան երեք ամբիոնների վարիչներ՝ պրոֆ. պրոֆ. Յու. Ավետիսյանը, Ն. Հարությունյանը և դոց. Վ. Պետրոսյանը: Առաջադրվեցին 4 թեկնածուներ՝ հետևյալ համամասնությամբ՝ հայոց լեզվի ամբիոն՝ 2, մանկավարժության և ընդհանուր լեզվաբանության ամբիոններ՝ 1-ական:

2016-18 թթ. ընթացքում նախատեսվող միջազգային գիտաժողովների և սեմինարների անցկացման ծրագրերի առաջադրման հարցի առիթով ելույթ ունեցան բոլոր

ամբիոնների վարիչները: Դրվատանքով հիշվեց հատկապես մանկավարժության ամբիոնի վարիչի՝ պրոֆ. Ն. Հարությունյանի ղեկավարությամբ նախորդ տարի կազմակերպված տարածաշրջանի՝ մանկավարժության միջազգային գիտաժողովը, վերստին շեշտվեցին դրա կարևորությունն ու արդիականությունը: Ամբիոնների վարիչները խոստացան առաջիկայում ներկայացնել հնարավորինս իրատեսական ծրագրեր:

Ֆակուլտետային օրինակելի կանոնադրությունը հաստատվեց օրակարգի **4-րդ հարցում**: Պրոֆ. Ա. Ավագյանն ընթերցեց հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի նոր կազմի համար բոլոր ամբիոնների կողմից ներկայացված թեկնածուների ցանկը. հիմք ընդունելով գաղտնի (փակ) քվեարկության արդյունքները՝ հայոց լեզվի ամբիոնից ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներ են առաջադրվել դոց. դոց. Լեոնիդ Գուրգենի Թեյանը և Բագրատ Սուրենի Ներսիսյանը, հայ գրականության ամբիոնից՝ պրոֆ. Ալբերտ Արշավիրի Մակարյանը, նորագույն շրջանի հայ գրականության ամբիոնից՝ պրոֆ. Վազգեն Արշալույսի Գաբրիելյանը, գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնից՝ Ժենյա Անդրանիկի Քալանթարյանը, հայոց լեզվի պատմության ամբիոնից՝ դոց. Նարինե Հակոբի Դիլբարյանը, ընդհանուր լեզվաբանության ամբիոնից՝ պրոֆ. Լիանա Սամվելի Հովսեփյանը, մանկավարժության ամբիոնից՝ դոց. Գարուն Աշոտի Բաբայանը:

Գիտխորհուրդը միաձայն հաստատեց վերոհիշյալ կազմը:

Գիտխորհրդի այս նիստում չքննարկվեցին ընթացիկ հարցեր, և վերջում գիտխորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց նիստի բոլոր մասնակիցներին և աշխատանքը հայտարարեց ավարտված:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**